

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ#



ARMENIAN NATIONAL
AGRARIAN UNIVERSITY
INTERNATIONAL RELATIONS DEPARTMENT#

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ
2017-18 ՈՒՍ. ՏԱՐՎԱ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևան 2018

Պայմանագրեր և համաձայնագրեր

2017-18 ուս. տարում շարունակվել են ՀԱԱՀ-ի միջազգայնացմանն ու արտաքին կապերի ընդլայնմանն ուղղված աշխատանքները:

Ներկայումս Համալսարանն ունի շուրջ 102 գործուն պայմանագրեր եվրոպական, ամերիկյան և ԱՊՀ տարբեր բուհերի և միջազգային կազմակերպությունների հետ: Այդ շրջանակներում Համալսարանն ակտիվորեն համագործակցում է շուրջ 20 բուհերի և կազմակերպությունների հետ:

2017-18 ուս. տարում կնքվել կամ վերահաստատվել են համագործակցության 19 հուշագրեր և պայմանագրեր.

- Սան Պաուլոյի համալսարանի "Լուիզ Դե Քուեյրոզի" անվան գյուղատնտեսության բարձրագույն դպրոց (Բրազիլիա)

- Ս. Ա. Նիյազովի անվան թուրքմենական գյուղատնտեսական համալսարան (Թուրքմենստան)

- Անտառագիտության համալսարան (Սոֆիա, Բուլղարիա)

- Սանկտ-Պետերբուրգի պետական ագրարային համալսարան (Ռուսաստան)

- Պոլտավայի պետական ագրարային ակադեմիա (Ուկրաինա)

- Հումանիտար գիտությունների և տեխնոլոգիաների Լուսոֆոն համալսարան (Պորտուգալիա)

- Դաշնային պետական բյուջետային բարձրագույն կրթական հաստատություն «Չուվաշական պետական գյուղատնտեսական ակադեմիա» (Չուվաշիայի Հանրապետության, ՌԴ)

- Բույսերի սորտերի ուսումնասիրության Ուկրաինական ինստիտուտ (Ուկրաինա)

- BILIMORIA & ASSOCIATE ընկերություն, (Հնդկաստան)

- Վիյորայի «Իսմայիլ Քեմալ» համալսարան (Ալբանիա)

- Յարմուքի համալսարան (Հորդանանի Հաշիմյան թագավորություն)

- Անդիջանի գյուղատնտեսական ինստիտուտ (Ուզբեկստան)

- Մոզիլի պարենամթերքի պետական համալսարան (Բելառուս)

- Սանտա Մոնիկա ուսումը արտերկրում ԱՊԸ (Հարավային Հնդկաստան)

- Մարկեի պոլիտեխնիկական համալսարան (Իտալիա)

- Ս. Բաիշևի անվան Ակտյուբինսկի համալսարան (Ակտյուբե, Ղազախստան)

- Ղազախստանի ազգային ագրարային համալսարան (Ալմաթի, Ղազախստան)

- Վիննիցկիի ազգային ագրարային համալսարան (Ուկրաինա)

- Ուկրաինայի գիտակրթական կոնսորցիում (Ուկրաինա)

ՀԱԱՀ-ի համար կարևոր և գործուն կոնսորցիումներ են ԱՊՀ առաջատար ագրարային բուհերի ռեկտորների խորհուրդը, ինչպես նաև Եվրոմիության Էրազմուս+ ցանցային ծրագրերի բուհերը:

ԷՐԱԶՄՈՒՍ+ ՀԳ1 ծրագրի արդյունքներ

2017-18 թթ. Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունություն ծրագրի շրջանակներում իրականացվել են բազմաթիվ դասավանդումներ և վերապատրաստումներ՝ համագործակցություն ծավալելով շուրջ 20 տարբեր եվրոպական համալսարանների հետ: 2017-18 ուս. տարվա ընթացքում ՀԱԱՀ-ն ունեցել է 27 Էրազմուս+ ՀԳ1 ծրագրեր, որից 21-ը՝ նոր, իսկ 6-ը՝ 2016-17 տարվանից: Ընդ որում, Էրազմուս+ ծրագրերի քանակով այս տարի ՀԱԱՀ-ն երկրորդն է ՀՀ բուհերի շարքում:

- **Արևմտյան Ատիկայի համալսարան (նախկին Պիրեոսի համալսարան) (Հունաստան)** – ՀԱԱՀ 2 ուսանող սովորել և 4 աշխատակիցներ այնտեղ վերապատրաստում են անցել, իսկ Արևմտյան Ատիկայի համալսարանի 3 աշխատակիցներ այցելել են ՀԱԱՀ:
- **Շոտլանդիայի արևմտյան համալսարան (Մեծ Բրիտանիա) – ծրագրի շրջանակներում** ՀԱԱՀ-ն հյուրընկալել է 1 աշխատակից, իսկ ՀԱԱՀ 2 աշխատակիցներ վերապատրաստում են անցել տվյալ համալսարանում:
- **Շեցինի համալսարան (Լեհաստան)** – 1 աշխատակից ՀԱԱՀ-ից վերապատրաստում է անցել ընդունող համալսարանում:
- **Կրակովի Յագելլոնիան համալսարան (Լեհաստան)** – ՀԱԱՀ 1 աշխատակից է այնտեղ վերապատրաստվել, իսկ 2 աշխատակից Յագելլոնիան համալսարանից եկել են ՀԱԱՀ՝ դասավանդելու և վերապատրաստվելու նպատակով:
- **Սիլեսիա համալսարան (Լեհաստան)** – ծրագրի շրջանակներում դեռ շարժունություն չի կատարվել:
- **Նիտրայի գյուղատնտեսական համալսարան (Սլովակիա)** – ծրագրի շրջանակներում դեռ շարժունություն չի կատարվել:
- **Մինհոյի համալսարան (Պորտուգալիա)** – յուրաքանչյուր համալսարանից մեկական աշխատակից մասնակցել է փոխանակման ծրագրին:
- **Ավեիրոյի համալսարան (Պորտուգալիա)** – ՀԱԱՀ 1 աշխատակից է վերապատրաստում անցել տվյալ համալսարանում:
- **Էստոնիայի կենսաբանական գիտությունների համալսարան (Էստոնիա)** – ՀԱԱՀ 1 ուսանող սովորել, իսկ 2 աշխատակիցներ վերապատրաստվել են տվյալ համալսարանում:
- **Վառնայի կառավարման համալսարան (Բուլղարիա)** – ՀԱԱՀ 4 ուսանող ուսումը շարունակել է տվյալ համալսարանում:
- **Վիձեմեի կիրառական գիտությունների համալսարան (Լատվիա)** – ՀԱԱՀ 1 ուսանող է մեկնել տվյալ համալսարան՝ ուսման նպատակով:
- **Տուշայի համալսարան (Իտալիա)** – ՀԱԱՀ 7 ուսանողներ սովորել և 5 աշխատակիցներ վերապատրաստում են անցել տվյալ համալսարանում:
- **Հոռմի Սապիենցա համալսարան (Իտալիա)** – ՀԱԱՀ 1 աշխատակից վերապատրաստվել է տվյալ համալսարանում:
- **Սալերնոյի համալսարան (Իտալիա)** – ՀԱԱՀ 1 աշխատակից վերապատրաստվել է տվյալ համալսարանում:
- **Բարսելոնայի ինքնավար համալսարան (Իսպանիա)** – ՀԱԱՀ 3 աշխատակիցներ այնտեղ վերապատրաստում են անցել:
- **Գրանադայի համալսարան (Իսպանիա)** – ՀԱԱՀ 2 աշխատակիցներ վերապատրաստվել են Գրանադայի համալսարանում:
- **Ալմերիայի համալսարան (Իսպանիա)** – ՀԱԱՀ 1 ուսանող և 4 աշխատակից համապատասխանաբար սովորել և վերապատրաստվել է ընդունող համալսարանում:
- **Միգել Հերնանդեզի համալսարան (Իսպանիա)** – ՀԱԱՀ 3 աշխատակիցներ դասախոսություններով են հանդես եկել տվյալ համալսարանում:
- **Վիեննայի բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարան (Ավստրիա)** – ՀԱԱՀ 4 աշխատակիցներ վերապատրաստում են անցել տվյալ համալսարանում:
- **Վայենշտեֆան-Թրիսդորֆ կիրառական գիտությունների համալսարան (Գերմանիա)** – ՀԱԱՀ 4 աշխատակիցներ վերապատրաստվել են տվյալ համալսարանում:
- **Գայզենհայմի գինու համալսարան (Գերմանիա)** – ՀԱԱՀ 4 ուսանողներ սովորել և 2 աշխատակիցներ վերապատրաստվել են տվյալ համալսարանում, իսկ Գայզենհայմի

գինու համալսարանից 1 ուսանող և 1 աշխատակից ծրագրի շրջանակներում այցելել է ՀԱԱՀ:

- **Ռադբուդի համալսարան (Նիդերլանդներ)** – ՀԱԱՀ 10 աշխատակիցներ վերապատրաստում են անցել նշված համալսարանում:

Գերմանիայում պրակտիկայի ծրագրեր

Համալսարանը ներկայումս պայմանագրեր ունի գերմանական մի քանի կազմակերպությունների հետ, որոնք ապահովում են ՀԱԱՀ ուսանողների պրակտիկան Գերմանիայում: Դրանք են՝ Logo, JD East, GeTech, Praxx կազմակերպությունները: Հաշվետու ժամանակաշրջանում ուսանողներն իրենց պրակտիկան հիմնականում անցկացրել են միայն Praxx կազմակերպությունում՝ 2 թվով 5 ուսանողներ, իսկ երկուսը՝ GeTech:

Էրազմուս+ ՀԳ2 ծրագրեր

Այս տարի ՀԱԱՀ-ն առաջին անգամ ունի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանն ուղղված 2 նոր՝ *Էրազմուս+ Հիմնական Գործողություն-2 ծրագրեր*:

Դրանցից առաջինի գլխավոր համակարգողը Վայհենշտեֆան-Թրիսդորֆի համալսարանն է: «Տեսական ուղղվածությունից անցում դեպի գործնական կրթության ագրարային ուսուցման ոլորտում» (TOPAS) ծրագիրը 36 ամիս տևողությամբ ծրագիր է (2017-2020 թթ.): Դրա նպատակն է լրացնել Ուկրաինայի, Հայաստանի և Ուզբեկստանի՝ ԽՍՀՄ-ից ժառանգած բարձրագույն կրթական համակարգերում գյուղատնտեսական գիտությունների ոլորտում առկա բացը, ներդնել և բարելավել կրթական վերջնաարդյունքների վրա հիմնված մասնագիտական կողմնորոշման գործնական ծրագրեր: Ծրագրի արդյունքում կմշակվեն ագրարային կրթության այն գործիքները, որոնք կնպաստեն գործնական հմտությունների ձեռքբերմանն ուսուցման ընթացքում և տեսության վրա հիմնված կրթությունից անցում կկատարվի գործնականին: Այս ծրագրի անդամ երկրներն են Գերմանիան, Ռումինիան, Լեհաստանը, Միացյալ Թագավորությունը, Հայաստանը (ՀԱԱՀ և ԵՊՀ), Ուկրաինան և Ուզբեկստանը: Ծրագրի շրջանակներում փետրվարին 2 անձ ուղևորվել են Սամարղանդ՝ առաջին աշխատանքային հանդիպմանը մասնակցելու համար:

«Կենսաարտադրանքների տեխնոլոգիայի ոլորտում գերազանցության հայկական ցանց» (AbioNet) ծրագիրը 36 ամիս տևողությամբ ծրագիր է (2017-2020 թթ.), որի համակարգողը Սալոնիկի Ալեքսանդրի անվան տեխնոլոգիական կրթական ինստիտուտն է: Նախագծի նպատակն է հայաստանյան և եվրոպական համալսարանների կենտրոնների, բաժինների և լաբորատորիաների միջև ստեղծել միջառարկայական, հաղորդակցական և կառավարման ցանց՝ կենսաարտադրանքների տեխնոլոգիայի ոլորտում համատեղ կրթություն իրականացնելու նպատակով: Նախագծի շրջանակներում նախատեսվում է կազմակերպել գյուղատնտեսական և սննդարդյունաբերության ոլորտին առնչվող վերապատրաստման կարճաժամկետ դասընթացներ՝ 1-ից 10 ամիս տևողությամբ: Նախատեսվում է նաև մագիստրոսական համատեղ ծրագրի ստեղծում: Նախագծի անդամ երկրներն են Հունաստանը, Հայաստանը, Գերմանիան, Պորտուգալիան և Իտալիան: Ծրագրի շրջանակներում փետրվարին 2 անձ ուղևորվել են Սալոնիկ՝ առաջին աշխատանքային հանդիպմանը մասնակցելու համար:

Այլ ծրագրեր

Եվրասիա կրթական ծրագրի (CPEA-LT-2016/10092) ֆինանսավորմամբ 2017 թ.-ից Նորվեգիայի Թրոմսոյի Արկտիկական համալսարանի, Նորվեգիայի Կենսաէկոնոմիկայի Ինստիտուտի հետ համատեղ իրականացվում է «Գյուղատնտեսական զարգացման համար Նորվեգիա-Հայաստան համագործակցության ծրագրի բույսերի մոլեկուլային կենսաբանության և կենսատեխնոլոգիայի բնագավառներում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում 2017 թ. սեպտեմբերին ՀԱԱՀ-ն հյուրընկալեց Նորվեգական պատվիրակությունը՝ ՀՀ-ում և ՌԴ-ում Նորվեգիայի Թագավորության դեսպան Լ. Նամթվեդթի գլխավորությամբ, որի ընթացքում ՀԱԱՀ և Նորվեգիայի Տրոմսոյի Արկտիկական Համալսարանների միջև կնքվեց համագործակցության հուշագիր: Մշակվել են նոր դասընթացների՝ «Բույսերի կենսատեխնոլոգիա» և «Բույսերի մոլեկուլային կենսաբանություն» առարկայական ծրագրերը, որոնք ներկայացվելու են ՀԱԱՀ-ի մեթոդական խորհրդի քննարկմանը, ինչպես նաև «Բույսերի կենսատեխնոլոգիա» ուսումնամեթոդական ձեռնարկը: Ծրագրի շրջանակներում 2018 թ.-ին ՀԱԱՀ-ի ուսանողների համար կազմակերպվել են կարճաժամկետ դասընթացներ «Բույսերի գենոմային ԴՆԹ-ի անջատումը և հսկումը ագարոգային գելի վրա» և «Կենսահինֆորմատիկա» թեմաներով: Միաժամանակ ՀԱԱՀ աշխատակիցների և ուսանողների համար կազմակերպվել են անգլերեն լեզվի դասընթացներ՝ «Ընդհանուր անգլերեն լեզու» և «Գիտական հաղորդակցում անգլերենով»:

Հաշվետու ժամանակաշրջանում բակալավրիատի 3 ուսանողներ, մեկ մագիստրանտ և մեկ հայցորդ վերապատրաստվել են Նորվեգիայի Սաերհեիմ քաղաքի Կենսաէկոնոմիկայի Ինստիտուտում (NIBIO) և Նորվեգիայի Արկտիկական Համալսարանում՝ ներգրավված լինելով տարբեր գիտահետազոտական ծրագրերում:

Ծրագրի ընթացքում իրականացվում են գիտահետազոտական պիլոտային ծրագրեր, ուսանողների մասնակցությամբ: Դրանք են՝

1. կենսատեխնոլոգիական մեթոդներով վայրի հապալասի բազմացում և ուսումնասիրում,
2. վայրի ելակի բազմացում և հետազոտում in vitro կուլտուրայում,
3. in vitro պայմաններում միկրոկտրոնավորման մեթոդով ծաղիկի բազմացում:

Appear ծրագրի շրջանակներում Վիեննայի բնական ռեսուրսների համալսարան (BOKU) համալսարանի օժանդակությամբ ՀԱԱՀ-ն կատարում է «Խթանել օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանում» ծրագիրը: Կազմավորվել է շահակիցների խումբ՝ օրգանական գյուղատնտեսության մագիստրոսական ծրագրի ստեղծմանն օժանդակելու նպատակով: Շահակիցների խորհրդի առաջին հանդիպումը տեղի ունեցավ 2017 թ. հոկտեմբերին, որի ընթացքում շահակիցներին ներկայացվեցին ծրագրի առաջընթացը, ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում վեր հանված մասնագիտական կարիքները և օրգանական գյուղատնտեսության մագիստրոսական ծրագրի նախնական տարբերակը: Մայիսին ՀԱԱՀ 4 աշխատակիցներ վերապատրաստվեցին Վիեննայի BOKU համալսարանում: Կազմվել է նաև օրգանական գյուղատնտեսության մագիստրոսական ծրագրի ուսումնական պլանի նախնական տարբերակը: Ծրագրի թիմը մասնակցում է Հայաստանում կազմակերպվող օրգանական գյուղատնտեսությանը վերաբերող սեմինար-հանդիպումներին,

աշխատաժողովներին: Այս առումով կարևորվում է համագործակցությունը «Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախագիծ (ՕԳԱՆ)» ծրագրի հետ: 2017 թ. սեպտեմբերից առայսօր ծրագրի թիմը մասնակցել է հետևյալ սեմինար-հանդիպումներին.

- Մասնակցություն ՕԳԱՆ ծրագրի կողմից իրականացվող ՀՀ քոլեջների համար «Օրգանական գյուղատնտեսություն» առարկայի մշակման աշխատանքներին և էքսպերտային խմբի քննարկումներին 2017-2018թթ.

- Մասնակցություն ՕԳԱՆ ծրագրի կողմից կազմակերպված երկօրյա աշխատաժողովին «Օրգանական արտադրանքի արտահանման հնարավորություններն ու մարտահրավերները ՀՀ-ում» թեմայով և այցելություններ օրգանական ֆերմաներ 2017թ. սեպտեմբեր ամսին:

- Մասնակցություն «Գյուղական կյանքի և ավանդույթների» փառատոնին 2017թ. սեպտեմբեր ամսին:

- Օրգանական ոլորտի զարգացման (IFOAM Organics International-ի հետ համատեղ մշակված) պլանի ներկայացում ոլորտի շահառուներին և բազմաթիվ միջազգային պատվիրակությունների ընդունում էքսպերտային կարծիքի ներկայացման նպատակով:

- ՀՀ-ում օրգանական գյուղատնտեսության պատմության և «Խթանել օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանում» ծրագրի առաջընթացի ներկայացում Ավստրիայից Ժամանած BOKU համալսարանի մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների համար Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնում:

Արտերկրում կազմակերպված համաժողովներ և վերապատրաստումներ

2017 թ. օգոստոսին Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի շրջանակներում համալսարանի 9 աշխատակիցներ մասնակցեցին Ռադբուդի համալսարանում կազմակերպված ամառային դպրոցին, որի շրջանակներում վերապատրաստվեցին դասախոսական վարպետության և կենսաբազմազանության ոլորտներում:

2017 թ սեպտեմբերին Էրազմուս + ՀԳ1 ծրագրի շրջանակներում ՀԱԱՀ-ի արտաքին կապերի դեպարտամենտի առաջատար մասնագետ Սաթիկ Մարտինի Ավագյանը մեկնել է Վիեննայի բնական ռեսուրսների համալսարան՝ ՀԱԱՀ-ի միջազգային փորձի ներկայացման և բուհերի միջև համագործակցության հետագա քայլերի քննարկման նպատակով:

2017 թ հոկտեմբերին DAAD ծրագրի և ՀԱԱՀ-ի համագործակցության շրջանակներում մագիստրատուրայի բաժնի վարիչ Գ. Գասպարյանը և ագրարային մանեջմենթ ծրագրի համակարգող Ա. Պետրոսյանը մեկնել են Գերմանիա, Վայիենշտեֆան-Թրիսդորֆ համալսարանի կողմից կազմակերպվող սեմինարին մասնակցելու նպատակով:

2017 թ հոկտեմբերին TEMPUS LeAGUe ծրագրի շրջանակներում ՀԱԱՀ-ի արտաքին կապերի դեպարտամենտի մասնագետ Զարուհի Գևորգի Մարգարյանը մեկնել է Պորտուգալիա, Կոիմբրայի համալսարան, ծրագրի ավարտական հաշվետվության նախապատրաստման հետ կապված աշխատանքներին մասնակցելու նպատակով:

2017 թ հոկտեմբերին Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի շրջանակներում, կադրերի և հատուկ բաժնի պետի տեղակալ Գ. Հովսեփյանը, արտաքին կապերի դեպարտամենտի դրամաշնորհային ծրագրերի բաժնի վարիչ Ա. Ալեքսանյանը և աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի վարիչ Լ. Մնացականյանը մասնակցել են Պիրեուսի կիրառական

գիտությունների համալսարանում (Հունաստան) կայանալիք «Միջազգային շաբաթ» միջոցառմանը:

2017թ նոյեմբերին Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի շրջանակներում, ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի դասախոս Լ. Մամիկոնյանը վերապատրաստման նպատակով մեկնել է Կրակովի Յագելոնյան համալսարան:

2017 թ. նոյեմբերին ագրարային մենեջմենթ ծրագրի մասնակիցներ Ա. Պետրոսյանը, Ա. Շահբազյանը, ասիստենտներ Հ. Երիցյանը և Ա. Դավթյանը Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի շրջանակներում վերապատրաստվելու նպատակով մեկնել են Վայհենշտեֆան-Թրիսդորֆի համալսարան:

2017 թ նոյեմբերին դեկան Է. Ղազարյանը մեկնել է Սարատովի պետական ագրարային համալսարան, Վայհենշտեֆան-Թրիսդորֆ կիրառական գիտությունների համալսարանի գործընկեր բուհերի ռեկտորների հերթական համաժողովին մասնակցելու նպատակով:

2017 թ նոյեմբերին ՀԱԱՀ ռեկտոր Ա. Թարվերդյանը մեկնել է Ուկրաինայի կիրառական կենսատեխնոլոգիաների և բնօգտագործման համալսարան, համաժողովի մասնակցելու նպատակով:

2017 թ նոյեմբերին ՀԱԱՀ ռեկտոր Ա. Թարվերդյանը մեկնել է Գերմանիայի Դաշնություն, Վայհենշտեֆան-Թրիսդորֆի համալսարանում կազմակերպվող համագործակցության ծրագրերի քննարկմանը և համագործակցության նոր համաձայնագրի ստորագրմանը մասնակցելու նպատակով:

2018 թ հունվարին տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր Վ.Մելքոնյանը և արտաքին կապերի դեպարտամենտի պետ Գ. Համբարձումյանը Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի շրջանակներում մեկնել են Իսպանիայի Գրանադայի համալսարան՝ վերապատրաստման և միջազգայնացման փորձի ընդլայնման նպատակով:

2018 թ փետրվարին Էրազմուս+ ՀԳ2 Abionet ծրագրի շրջանակներում կենսաքիմիայի, մանրէակենսաբանության և վիրուսաբանության ամբիոնի վարիչ Գ. Մարմարյանը և անասնաբուժական սանիտարական փորձաքննության և զոոհիգիենայի ամբիոնի վարիչ Գ. Համբարձումյանը մեկնել են Սալոնիկ՝ ծրագրային առաջին հանդիպմանը:

2018 թ. փետրվարին անասնաբուժություն մասնագիտության 1-ին կուրսի մագիստրանտ Ս. Տեր-Ավետիսյանը մեկնել է Էստոնիա՝ Տարտուի համալսարանում մասնակցելու «Անասնաբուժական բժշկագիտության և կենդանաբանական գիտությունների ինստիտուտի» կողմից կազմակերպված գիտական գործնական աշխատանքներին:

2018 թ փետրվարին Էրազմուս+ ՀԳ2 Topas ծրագրի շրջանակներում ԱԿԴ պետ Գ. Համբարձումյանը և մագիստրատուրայի բաժնի մասնագետ Ն. Գասպարյանը մեկնել են Սամարկանդ՝ ծրագրային առաջին հանդիպմանը:

2018 թ փետրվարին արտաքին կապերի դեպարտամենտի մասնագետներ Ն. Աթանեսյանը և Զ. Մարգարյանը, անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուժության ֆակուլտետի դեկանի տեղակալ Ս. Եղոյանը, Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի շրջանակներում վերապատրաստման նպատակով մեկնել են Վիեննայի բնական գիտությունների համալսարան:

2018 թ. փետրվարին Ագրոբիզնեսի դեպարտամենտի պետ Վ. Ուռուտյանը մեկնել է Լիսաբոն՝ ԵՄ ծրագրի Եվրոպական համագործակցություն գիտության և տեխնոլոգիաների ոլորտում աշխատաժողովին զեկույցով հանդես գալու նպատակով:

2018 թ մարտին ԱԿԴ դրամաշնորհային ծրագրերի բաժնի վարիչ Ա. Ալեքսանյանը և կենսաքիմիայի, մանրէակենսաբանության և վիրուսաբանության ամբիոնի վարիչ Գ. Մարմարյանը Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի շրջանակներում դասավանդման նպատակով մեկնել են Շոտլանդիայի արևմտյան համալսարան:

2018 թ մարտին ագրոբիզնեսի դեպարտամենտի պետ Վ. Ուռուտյանը համագործակցությունը խորացնելու նպատակով մեկնել է Վիեննայի բնական ռեսուրսների համալսարան:

2018 թ. մարտին Ագրոբիզնես դեպարտամենտի 2-րդ կուրսի մագիստրանտ Է. Աղաբաբյանը մեկնել է Մոսկվա՝ Տիմիրյազևի համալսարանում կազմակերպվող 71-րդ միջազգային ուսանողական գիտապրակտիկ կոնֆերանսին մասնակցելու նպատակով:

2018 թ ապրիլի 6-ից մինչև ապրիլի 20-ը արտաքին կապերի դեպարտամենտի մասնագետ Լ. Թովմասյանը Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի շրջանակներում վերապատրաստման նպատակով մեկնել է Պորտուգալիա՝ Ավերիոյի համալսարան:

2018 թ ապրիլին Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի շրջանակներում ԱԿԴ առաջատար մասնագետ Ս. Ավագյանը, կադրերի և հատուկ բաժնի տեսուչ-օպերատոր Է. Սմբատյանը, աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի վարիչ Լ. Մնացականյանը և ՏՏ և ԻԾ կենտրոնի տեղեկատվական համակարգերի կառավարման բաժնի առաջատար մասնագետ Լ. Պապիկյանը մեկնեցին Ալմերիայի համալսարան՝ միջազգային շաբաթին մասնակցելու նպատակով:

2018 թ ապրիլին Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի շրջանակներում ԱԿԴ առաջատար մասնագետ Զ. Պողոսյանը վերապատրաստման նպատակով մեկնել է Սապիենցիայի համալսարան:

2018 թ ապրիլին ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Յու. Յարմարյանը մեկնել է Ուկրաինա, ք. Ուման, մասնակցելու “Անասնապահության ոլորտի կայուն զարգացման ռազմավարության պլանավորում” տարածաշրջանային հանդիպմանը:

2018 թ ապրիլին ԱՍՓ, սննդամթերքի անվտանգության և հիգիենայի ամբիոնի վարիչ Գ. Համբարձումյանը և նույն ամբիոնի դոցենտ Ս. Ալթունյանը Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի շրջանակներում սննդամթերքի անվտանգության ոլորտում վերապատրաստվելու նպատակով մեկնել են Բարսելոնիայի ինքնավար համալսարան:

2018 թ մայիսին “Օրգանական գյուղատնտեսության խթանումը Հայաստանում” ծրագրի անդամներ Ա. Սահակյանը, Ս. Մամաջանյանը, Հ. Գրիգորյանը և Ն. Հովհաննիսյանը մեկնեցին Վիեննայի բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարան:

2018 թ մայիսին Ագրոբիզնեսի դեպարտամենտի պետի տեղակալ Ս. Մեժլումյանը Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի շրջանակներում մասնակցեց Մինհոյի համալսարանում կազմակերպվող միջազգային շաբաթին:

2018 թ մայիսին ԱՍՓ, սննդամթերքի անվտանգության և հիգիենայի ամբիոնի դոցենտ Ա. Աբովյանը և ԱԿԴ առաջատար մասնագետ Զ. Մարգարյանը Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի շրջանակներում մեկնել են Էստոնիայի բնական գիտությունների համալսարան միջազգային շաբաթին մասնակցելու նպատակով:

2018 թ մայիսին Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի շրջանակներում ասպիրանտուրայի վարիչ Գ. Գասպարյանը վերապատրաստման նպատակով մեկնել է Բարսելոնայի ինքնավար համալսարան:

2018 թ մայիսին ասպիրանտուրայի վարիչ Գ. Գասպարյանը մեկնել է Պոլտավայի պետական ագրարային համալսարան՝ միջազգային հանդիպմանը մասնակցելու նպատակով:

2018 թ մայիսին Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի շրջանակներում ագրարային մենեջմենթ ծրագրի համակարգող Ա. Պետրոսյանը մեկնել է Շեցինի համալսարան՝ միջազգային շաբաթին մասնակցելու նպատակով:

2018 թ մայիսին ՀԱԱՀ ռեկտոր Ա. Թարվերդյանը մեկնել է Վայհենշտեֆան-Թրիսդորֆ համալսարան՝ “Ագրարային մենեջմենթ” ծրագրի շրջանավարտներին կրկնակի դիպլոմներ տրամադրելու, ծրագրի գերմանական հավատարմագրման հարցերի ավարտական փուլը վերջնական քննարկելու, ինչպես նաև երկու համալսարանների մասնակցությամբ Էրազմուս+ ծրագրի աշխատանքները քննարկելու նպատակով:

2018 թ հունիսին Ընդհանուր կենսաբանության ամբիոնի դասախոս Ա. Ալեքսանյանը մեկնել է Իտալիա, Սուվոնա քաղաքում կայանալիք Եվրասիայի խոտաբուսային բուսականության 15-րդ գիտաժողովին զեկույցով հանդես գալու նպատակով:

2018-ից հունիսին ագրարային մենեջմենթ ծրագրի մասնակիցներ Ա. Պետրոսյանը, Ա. Շահբազյանը, Ն. Գասպարյանը և ագրոբիզնեսի կազմակերպման և կառավարման ամբիոնի ասիստենտ Հ. Անտոնյանը մեկնել են Վայհենշտեֆան-Թրիսդորֆ համալսարան՝ սեմինարին մասնակցելու նպատակով:

2018 թ. մայիսին Էրազմուս + ՀԳ1 ծրագրի շրջանակներում գրաֆիկայի և մեքենաների նախագծման հիմունքների ամբիոնի պրոֆեսոր Ա. Ամիրյանը, հիդրոտեխնիկական կառուցվածքների և մեխորագիայի ամբիոնի դոցենտ Ն. Ալոյանը և բարձրագույն մաթեմատիկայի և տեսական մեխանիկայի ամբիոնի վարիչ Ա. Խաչատրյանը մեկնել են Միգել Հերնանդեսի համալսարան՝ դասավանդման և վերապատրաստվելու նպատակով:

ՀԱԱՀ-ում կազմակերպված սեմինարներ, միջոցառումներ և հանդիպումներ

2017-18 ուս. տարում ՀԱԱՀ-ում վերապատրաստվել և դասախոսություններով հանդես են եկել 16 դասախոսներ տարբեր երկրների համալսարաններից (Կրակովի Յագիելլոնիան համալսարան, Արևմտյան Ատիկայի համալսարան, Նորվեգիայի Տրոմսոյի Արկտիկական համալսարան, Պիրեոուսի համալսարան, Արևմտյան Շոտլանդիայի համալսարան և այլն):

Հաշվետու ժամանակաշրջանում ՀԱԱՀ-ն հյուրընկալել է հյուրերի տարբեր երկրներից, որոնց հիմնական նպատակը երկկողմանի կապերի ստեղծումն էր կամ առկա կապերի ընդլայնումը: Ընդհանուր նմանատիպ մոտավորապես 53 հանդիպումներ են եղել: Մասնավորապես, երկկողմանի համագործակցության սկսելու և խթանելու ուղղությամբ ՀԱԱՀ-ում հյուրընկալվել են.

1. Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության զբոսաշրջության, ձեռագործ աշխատանքների և մշակութային ժառանգությունների կազմակերպության ներդրումների և տնտեսական գծով խորհրդատու Մորթեզա Ռամեզանի Գալեշին,
2. Bilimoria & Associate ընկերության խորհրդատու Նևիլ Բիլիմորիան,
3. Նորվեգիայի Տրոմսոյի Արկտիկական համալսարանի պատվիրակությունը, ինչպես նաև Նորվեգիայի թագավորության արտակարգ և լիազոր դեսպանը,
4. Ուելսի Աբերիսթվիթ համալսարանի միջազգային համագործակցության Միջին Արևելքի երկրների գծով համակարգող Մուրցա Ալի Ղազնավին,
5. Գայզենհայմի համալսարանի նախագահ դոկտոր Հանս Ռեյներ Շուլցը, Խաղողի և գինու միջազգային կազմակերպության նախագահ դոկտոր Մոնիկա Քրիստմանը,

6. Լիբանանյան-կանադական համալսարանի պրեզիդենտ դոկտոր Ռոնի Աբի Նախլեին, Հոգեբարձուների խորհրդի նախագահ դոկտոր Յոլանդ Սալեմին ու Լիբանանում ՀՀ դեսպանության մշակութային հարցերով խորհրդատու Միրել Խանամիրյանը,

7. ՌԴ Կուբանի պետական ագրարային համալսարանի արտաքին կապերի պատասխանատու Էլեոնորա Նայնոդինան,

8. Ֆրանսիայի Բուրգունդիա Ֆրանշ-Կոնտե համալսարանի պատվիրակությունը՝ համալսարանի նախագահ Նիկոլաս Շայլեի գլխավորությամբ,

9. Հարավային Կորեայի Հանրապետության Չոլա Բուք նահանգի գյուղատնտեսության կառավարման վարչակազմի գլխավոր տնօրեն Քիմ Չանգ Յոլին և Քան Սյունգ Գուին:

ՀԱԱՀ-ում կազմակերպվել են նաև բաց դասեր և սեմինարներ, մասնավորապես.

1. «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչների հանդիպումը Տնտեսագիտական, Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետների առկա և հեռակա բաժինների ավագ կուրսերի ուսանողների հետ՝ Ինեկոբանկում վերապատրաստման և աշխատանքի հնարավորությունները ներկայացնելու նպատակով,

2. EducationUSA կրթական խորհրդատու Շուշաննա Աբովյանի և Համֆրի կրթաթոշակային ծրագրի շրջանավարտ Հարություն Գևորգյանի վարած քննարկումը «Ամերիկյան կյանքի փորձառություն. թույլատրելին և անթույլատրելին: Ինչպես օգտագործել Լինկեդին-ը անձնական աճի համար» թեմայով՝ EducationUSA Հայաստանը Ամերիկյան խորհուրդների, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության հետ համատեղ մեկնարկած «We Share» հանդիպումների շարքի շրջանակներում,

3. «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին իրազեկման շաբաթ» նախաձեռնության շրջանակներում ՀՀ Սննդի անվտանգության պետական ծառայության տեսչության այցը,

4. Ճապոնիայի Կյորինի համալսարանի տնօրեն, պրոֆեսոր Շիգերու Կամիյաի զեկույցը «Helicobacter pylori և ստամոքսի միկրոբիոտան» թեմայով:

Բազմաթիվ այցեր և հանդիպումներ են եղել հատկապես Ագրարային մենեջմենթ միջազգային մագիստրոսական ծրագրի շրջանակներում Վալիենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանի ներկայացուցիչների հետ:

Մասնավորապես.

1. ՎԿԳՀ «Ագրարային մենեջմենթ» ծրագրի մագիստրանտներ Վիբկե Քալիյոֆերի և Քրիստոֆ Մեյերի այցը ՀԱԱՀ, որոնցից վերջինս կազմակերպեց սեմինար «Գյուղարտադրության էկոնոմիկա» և «Օտար լեզու (գերմաներեն)» առարկաներից,

2. ՎԿԳՀ դասախոս Միխայել Թրյոսթերի և Գյուղատնտեսության ֆակուլտետի միջազգային համագործակցության պատասխանատու Ա. Արիստակեսյանի այցը ՀԱԱՀ, որի շրջանակներում Միխայել Թրյոսթերն անցկացրեց մեկշաբաթյա սեմինար՝ «Բիզնես մենեջմենթ» առարկայից, իսկ Արամ Արիստակեսյանը՝ «Նախագծերի պլանավորում, գնահատում» առարկայից,

3. ՎԿԳՀ դասախոս Մարտին Մաուրերի վարած սեմինարը «Գյուղարտադրության էկոնոմիկա» առարկայից,

4. ՎԿԳՀ պրոֆեսոր, «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի համակարգող Յոհաննես Հոլցների հանդիպումը Ագրարային համալսարանի ավարտական կուրսի ուսանողների հետ,

5. Աբխազիայի պետական համալսարանի մի խումբ դասախոսների և ուսանողների այցը ՀԱԱՀ «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի շրջանակներում:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀԱԱՀ-ն հյուրընկալել է նաև ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանին Ի-Վի-Էն գինու ակադեմիայում, ՀՀ սիյուռքի նախարարության համահայկական ծրագրերի վարչության պետ Գ. Գյանջումյանին և Սիյուռքահայ ուսանողների խորհրդի հիմնադիր, հոգաբարձուների խորհրդի նախագահ Սամվել Մկոյանն, որոնք հանդիպեցին ՀԱԱՀ սիյուռքահայ ուսանողներին:

ՀՀ-ում կազմակերպված սեմինարներ, միջոցառումներ և հանդիպումներ

2017-2018 ուս. տարվա ընթացքում ՀԱԱՀ-ի տարբեր ստորաբաժանումների աշխատակիցները մասնակցել են ՀՀ-ում կազմակերպված տարաբնույթ միջոցառումների.

1. ՀՀ որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից կազմակերպված «Կրթություն և մասնագետ. մասնագիտական կրթությունն այսօր և վաղը» թեմայով կրթության որակի ապահովման 4-րդ ֆորում:

2. «Կրթություն և կարիերա էքսպո 2018» միջազգային ցուցահանդես, որտեղ ՀԱԱՀ-ն հանդես է եկել տաղավարով:

3. Տեմպուս «Բարձրագույն կրթության երրորդ աստիճանի կառուցվածքային զարգացում՝ համաձայն Զալցբուրգի սկզբունքների» դրամաշնորհային ծրագրի ամփոփիչ համաժողով:

4. «Արմպրոդէքսպո 2017» ֆիառատոն, որտեղ ՀԱԱՀ-ն հանդես է եկել տաղավարով:

5. «Հայագրոֆորում» ամենամյա համաժողով:

6. Տեմպուս «Տրանսազգային կրթության որակի ապահովումն ու ճանաչումը Հայաստանում և Վրաստանում» նախագծի ազգային տեղեկատվական եզրափակիչ համաժողով:

7. Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության կազմակերպված «Հայ-ֆրանսիական գիտահետազոտական ծրագրերի օր» գիտաժողով:

Հանդիպումներից մի քանիսը կազմակերպվել են Հայաստանում Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակի կողմից, որին ակտիվորեն մասնակցել և ելույթներ են ունեցել ԱԿԴ աշխատակիցները: Այդ հանդիպումներն են.

1. Էրազմուս+ Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագիտական թիմի կողմից կազմակերպված «Ձեռնարկատիրական կարողությունների զարգացումը բուհերում» թեմայով սեմինարը,

2. «Շարժունությունը Զալցբուրգի համալսարանի հետ» խորագրով հանդիպումը,

3. «Կրթությունը Եվրոպայում. իմ փորձը» խորագրով միջոցառումը,

4. «ECTS ուղեցույցի հայերեն տարբերակի ներկայացում և Բարձրագույն կրթության ոլորտում կարողությունների զարգացման BOOST ծրագրի ձեռքբերումներն ու ընթացքը» թեմայով հերթական հանդիպումը,

5. «Բուհերի ֆինանսական կառավարման և եկամտի աղբյուրների դիվերսիֆիկացման ռազմավարություն» թեմայով աշխատաժողովը,

6. «Ուսանողների և շրջանավարտների առաջադիմության ընթացքի հետևում բարձրագույն ուսումնական հաստատություններում» խորագրով սեմինարը և աշխատաժողովը,

7. Հայաստանում Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակի կողմից կազմակերպված տեղեկատվական օրերը:

2017-18 թթ. գործուղումների ցանկ (ուսանողներ)

Ծրագիր/պայմանագիր	Քանակ	%
Erasmus+ ՀԳ1	20	35.5
ՎԿԳՀ	21	37.5
MUSA & MOBIS	5	9
Եվրասիա կրթական ծրագիր	1	2
GeTech solutions	2	3.5
Praxx	5	9
Այլ (գիտաժողով, գիտական աշխատանք)	2	3.5
Ընդամենը	56	100

2017-18 թթ. գործուղումների ցանկ (դասախոսներ և վարչական անձնակազմ)

Ծրագիր/պայմանագիր	Քանակ	%
Erasmus+ KA1	51	67
Erasmus+ KA2	4	5
Tempus LeAGUe	1	1
ՎԿԳՀ	8	11
APPEAR	5	7
Տեխասի T&M համալսարան	1	1
Այլ (գիտաժողով, սեմինար)	6	8
Ընդամենը	76	100

Արտաքին կապերի դեպարտամենտը՝ աշխատանքների թափանցիկության և տեղեկատվության տարածման արդյունավետության բարձրացման ուղղությամբ բարելավել է ՀԱԱՀ կայքի՝ միջազգայնացմանը վերաբերող բաժինը: 2017-18 ուս. տարում դեպարտամենտի պաշտոնական ֆեյսբուքյան էջում և ՀԱԱՀ կայքում տեղադրվել է մոտավորապես 113 հայտարարություն, որից 56-ը՝ Էրազմուս+-ի մրցույթների և այլ հայտարարությունների վերաբերյալ, 29-ը՝ Էրազմուս+ ծրագրի մասնակցիների կողմից, մնացածը՝ տարաբնույթ տեղակատվություն:

Դեպարտամենտի աշխատանքի արդյունավետության վերլուծություն

Չնայած արտաքին համագործակցության ոլորտում ՀԱԱՀ-ի որոշակի հաջողություններին և համագործակցության անընդհատ ընդլայնմանը, այստեղ դեռևս առկա են թույլ կողմեր և

աշխատանքների կազմակերպման բարելավման հնարավորություններ: Մասնավորապես, առկա են թերացումներ հետևյալ հարցերում.

1. Եվրոպական չափանիշներին համապատասխան կացության պայմանների բացակայություն՝ օտարերկրյա դասախոսներին և ուսանողներին օթևանելու համար:
2. Ուսանողների և դասախոսների շրջանում օտար լեզվի իմացության թույլ մակարդակ:
3. Միջազգային ծրագրերին մասնակցելու տեսակետից ուսանողների և դասախոսների թույլ հետաքրքրվածություն և նախաձեռնողականություն:

ՀԱԱՀ-ի միջազգային համագործակցության հետագա զարգացման և միջազգային հեղինակության բարձրացման նպատակով անհրաժեշտ է՝

1. Զարգացնել համագործակցությունն արտասահմանյան համալսարանների և միջազգային կազմակերպությունների հետ՝ ամրապնդելով հինը և ստեղծելով նոր կապեր, ընդգրկվել մասնագիտական և գիտակրթական միջազգային ասոցիացիաներում և կազմակերպություններում:
2. Ընդլայնել համալսարանի մասնակցությունը միջազգային շարժունության ծրագրերին և բարձրացնել շարժունության համալսարանական ցուցանիշը:
3. Բարձրացնել միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ տեղեկացվածության աստիճանը,
4. Շեշտադրել օտար լեզուների տիրապետման կարևորությունն ուսանողների և դասախոսների համար:

S	W
<ul style="list-style-type: none"> • համալսարանի լայն համագործակցություն • համալսարանի ղեկավարության աջակցություն և հետաքրքրվածություն՝ միջազգայնացման գործընթացում • դեպարտամենտի աշխատակիցների ակտիվ գործունեություն 	<ul style="list-style-type: none"> • ուսանողների և աշխատակիցների՝ օտար լեզվի իմացության ցածր մակարդակ • համալսարանի՝ սեփական միջոցների անբավարարություն աշխատակիցների և ուսանողների վերապատրաստումների համար • հյուրերի կացարանի ոչ բավարար վիճակ • աշխատակիցների և ուսանողների թույլ հետաքրքրվածության միջազգային ծրագրերի նկատմամբ • աշխատակիցների շատ թույլ ներգրավվածություն՝ սեփական նախաձեռնությամբ միջազգային ծրագրերի իրականացման տեսակետից
O	T
<ul style="list-style-type: none"> • ագրարային բնույթի միակն բուիը ՀՀ-ում • ագրարային ոլորտի քաղաքականության խթանում կառավարության կողմից 	<ul style="list-style-type: none"> • ուսանողների թվաքանակի պակասում • ֆինանսական օժանդակության նվազում կամ ոչ բավարար մակարդակ